



ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Բիրականի աստղադիտարանը կը գտնուի Արագած լեռան հարավային լանջին՝ Հայաստանի Արագածոտնի մարզի Բիրական գիւղին մէջ:

Աստղադիտարանը կազմուած է երկու մասէ բնակելի աւանէ եւ գործառնական մասէ, որ կը ներառէ դիտաշտարակները, վարչական եւ տարրալուծարանային շէնքերը, ժողովասրահը եւ հիւրանոցը:

Արտաքին մուտքի աստիճանները ունին իրայատուկ ճարտարապետական ոճ:

**Քարահունջ՝ Հնագոյն Աստղագիտութիւնը
Հայաստանի Մէջ**

Հայաստանի մէջ աստղագիտութիւնը դարաւոր պատմութիւն ունի: Հին հայերը շարք մը աստղադիտական սարքեր կ'օգտագործէին գծագրելու գիշերային երկինքը:

Հայկական բարձրաւանդակի մէջ երկնքի բաժանումը կատարուած է հազարաւոր տարիներ առաջ: Ըստ անգլիացի աստղագետ եւ պատմաբան Վ.Տ. Օլքոտտի, Հին Հայաստանը միակ վայրն է, ուր կենդանակերպի բոլոր նշանները (կենդանիները) պատկերուած էին միասին: Վեր-

ջերս գիտնականները եկած են այն եզրակացութեան, որ հնդերոպական լեզուաընտանիքը սկիզբ առած է Հայկական Բարձրաւանդակէն, ուրկէ ան տարածուած է դէպի Ասիա, Պալքանեան կղզիներ, Յունաստանի ցամաքային մասը եւ Եւրոպա: Այստեղէն ալ կու գան եւրոպական լեզուներու մեծ մասի (ինչպէս նաեւ կենդանակերպի նշաններու) արմատները:

Հայերը օրացոյց ունեցած են շատ հին ժամանակներէ ի վեր: Նախ լուսնային ապա լուսնային/արեգակնային, իսկ աւելի ուշ՝ 365 օրուան արեգակնային օրացոյց 30 օրերէ բաղկացած, 12 ամիսներով եւ մէկ 5 օրուան բացութիւններով:

Իւրաքանչիւր տարին կը սկսէր Նաւասարդէն (որ կը համապատասխանէր նոր տոմարի Օգոստոս 11-ին):

Աստղագիտութիւնը միջնադարեան Հայաստանի մէջ շարունակեց զարգանալ շնորհիւ 7-րդ դարու թուաբանագետ, աշխարհագրագետ եւ աստղագետ Անանիա Շիրակացիի, որ համոզուած էր թէ երկիրը կլոր է,

որ ան եւ միւս մոլորակները կը պտըտին արեւի շուրջ, եւ Յարդագողի ճաւաքարի (Ծիր Կաթինը) կազմուած է բազմաթիւ թոյլ աստղեր:

Ան նաեւ ճիշդ մեկնաբանած է լուսնի եւ արեւի խաւարումները:

Աւելի ուշ 1054 թուական Մայիս ամսուն հայ աստղագետները գրանցեցին նոր աստղերը՝ քանի մը ամիս աւելի շուտ քան Չինաստանը:

Քարահունջը, որ յայտնի է նաեւ Չօրաց քարեր կամ Չօրաքար անուններով, հնագոյն աստղադիտարանի մէկ մասը կը կազմէ:

7.5 հազար տարի առաջ մեր նախնիները Քարահունջէն կը հետեւէին աստղերուն ու մնացած երկնային մարմիններուն:

2-3 մէթր բարձրութիւն եւ մինչեւ 10 թոն ծանրութիւն ունեցող պազալտի խոշոր քարաբեկորներէն իւրաքանչիւրը ոտքի կեցած կամ նստած մարդու աչքի մակարդակին հասնող բարձրութեան վրայ յստակ փորուած անցք ունի: Զրիստոնէութեան տարածման շրջանին անոնցմէ շատերու վրայ փորագրուած են խաչեր, եւ անոնց վրայի «աչքի անցքեր»ը կը վկայեն նախնական նշանակութեան մասին:



ԹԻՎ ԳՄՏՐԱՍՏԵՆ՝ ՈՒՅՍ ԿՈՂՄԵՆ-ՏԻՊՈՒՅԵՆՍ
ՆԿԱՐԱՍՏՐՈՒՆԵՆ՝ ՈՒՅՅԻ ԶԵՐՈՒՅԵՆՍ

ԻՆՉ ՊԻՏԵՆՔ ՀԱՍԱՐԱԿԱԾԻՆ ՄԱՍԻՆ

1.- Ինչո՞վ ծածկուած էր Հասարակածի շրջանը 716 միլիոն տարիներ առաջ

- ա.- Խոտերով
- բ.- Տաք լաւայով
- գ.- Սուրճի հատիկներով
- դ.- Սառոյցով

2.- Հասարակածին մօտ գտնուող շրջաններուն արեւածագը եւ արեւամարը շատ դանդաղ կ'ըլլան:


- ա.- Ճիշդ
- բ.- Սխալ

3.- Ինչո՞ւ Երկրագունդին մէջտեղի շրջանը քիչ մը ուռած է:

- ա.- Այդ շրջանին մօտ ապրող մարդոց եւ անտառներուն ծանրութեան պատճառով:
- բ.- Երկրագունդը իր առանցքին շուրջ դառնալով ստեղծուած ուժին պատճառով:
- գ.- Բեւեռներու շրջանին ծանր սառոյցներուն պատճառով ու հասարակածին մօտ գտնուող ովկիանոսներուն պատճառով:
- դ.- Հասարակածին մօտ գտնուող ովկիանոսներուն պատճառով:

4.- Ինչո՞ւ Հասարակածին մօտիկ շրջանները լաւ վայրեր են դէպի անշրպետ հրթիռներ արձակումի:

- ա.- Հասարակածի մօտ օդը յարմար է հրթիռներու արձակումի:
- բ.- Հրթիռներու գործածած վառելանիւթը աւելի աժան է հասարակածի շրջաններուն մէջ:
- գ.- Երկրագունդին կորութիւնը կը դիւրացնէ հրթիռներուն արձակումը տեսնելը:
- դ.- Օդի ճնշումը աւելի նուազ է հոն:



5.- Հասարակածին մօտ կանգնած անձերը աւելի արագ կը շարժին, քան հիւսիս կամ հարաւ բեւեռներուն մօտ գտնուող անձերը:

- ա.- Ճիշդ
- բ.- Սխալ

6.- Հետեւեալ ո՞ր քաղաքներէն չ'անցնիր հասարակածը:

- ա.- Էքուատոր
- բ.- Ֆրանսա
- գ.- Ինտոնէզիա
- դ.- Ուկրանտա

7.- Ո՞ր տեսակի անասուններուն կարելի է հանդիպիլ, թէ՛ հասարակածին մօտ, թէ՛ ալ Աւստրալիոյ մէջ:

- ա.- Արջ
- բ.- Նապաստակ
- գ.- Թեւատ (Փէսկուէն)
- դ.- Առիւծ

8.- Հասարակածի բոլոր շրջաններու կլիման տաք եւ խոնաւ է:

- ա.- Ճիշդ
- բ.- Սխալ

Մեր Խորվիկի մա՞յ Իք իսե Իքոդ շղճճոս
 -ու՛մ մի մճղոսգմոճ օմոցղոտրվլվճ ղլոհոդ :՜ Իոդսլ Իք
 ճոտ մնօ մս 'մզղղոճմճ Իվեոտբոճ ղոհ :Լոուլո -՛ 8
 տուքթ -՛ 2
 ոողոմճ -՛ 9
 :մճղսզոճ վիչն ովսննս .ի
 դսն ճմզ 'ուդոջել ճի մի միվելուսեոմո ոհ :ճրոզ
 -ելուսեոմո :թճ 009, ղոհոտրո ովքոմճ մի դսն 'ուվսլ
 -տմե մի տօր ղվճոհոմոոոս դսն ճմզ :նճվճ -՛ 5
 :ղսզ ՜ եոուղ ղճսոջել ճի միւշղճ վնՕ -՛ 4
 :իստոցտոտ դսմ
 -զղոսղոմիիս նսսղտե տօր ղվճոհոմոոոս -՛ 3
 :ղոզիմոմի 1 ոչոտոստօտ ղզոջտ մի Իք ղոմ
 -Իմ .ի եոմո տոճ մմոտրզմո ս ղեոճոտրզմո ճչր դսմզղ
 -ղոճմճ ճոհոմոոոս ,միտսոհոսղո՜ :Լոուլո -՛ 2
 իսնստոլ -՛ 1

ԱՅՂՂՈՎՈՒՄՈՆ

**Կետերը իրարու միացո՛ւր 1-83՝
 յայտնաբերելու համար պահուած
 պատկերը:**

**Կրնա՞ս գտնել իւրաքանչիւր թըռ-
 չունի համապատասխանող շուրջը:**

**ՄԵկ կետ պարունակող բաժին-
 ները սեւ ներկէ՝ յայտնաբերելու
 համար պահուած պատկերը:**

ՅԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՄԻՋԱԴԵՊԸ



Շուշան օղակայանն էր եւ իր թռիչքը կը սպասէր: Օղակաւ բարձրանալու քանի մը ժամ կար, հետեւաբար զբաղելու համար գիրք մը կը գնէ, ինչպէս նաեւ տոպրակ մը կրկնեփուկ (պիսքուի) եւ կը տեղաւորուի նստարանի մը վրայ: Ընթերցումի մէջ թաղուած, յանկարծ կ'անդրադառնայ, թէ քովը նստող մարդը իր կրկնեփուկի տոպրակէն կ'ուտէր: Շուշան կը ջանայ անտեսել մարդուն ըրածը եւ կը շարունակէ ուտել իր տոպրակէն, նախքան աներես դրացին վերջացներ անոր պարունակութիւնը, սակայն միաժամանակ կը ջղայնանար մարդուն համարձակութենէն, որ դեռ կը շարունակէր ուտել իր տոպրակէն: Երբ տոպրակին մէջ միայն մէկ հատիկ կրկնեփուկ կը մնայ, մարդը անիկա կը կիսէ եւ մէկ կէտը ուտելով, երկրորդը՝ իրեն կը հրամցնէ: Շուշան ապշած էր մարդուն անփափկանկատութենէն ու աներեսութենէն: Ան ոչ միայն առանց հրամցուելու կերած էր իր կրկնեփուկները, այլեւ շնորհակալութիւն իսկ չէր յայտնած:

Շուշան նման կացութեան մը բնաւ չէր մատնուած եւ շուարած էր ինչպէս վարուիլ քովի մարդուն հետ, հետեւաբար շատ կ'ուրախանայ, երբ իր օղակաւին թռիչքը կը յայտարարուի, կը հաւաքէ ապրանքները եւ կ'ուղղուի դէպի նշուած մուտքը, ծուռ նայուածք մը ձգելով մարդուն վրայ:

Օղակաւ բարձրանալէ ետք, երբ Շուշան կը տեղաւորուի իր աթոռին վրայ եւ կը սկսի քննել ձեռքի պայուսակը, ո՛վ զարմանք, կը նկատէ, որ իր գնած կրկնեփուկին տոպրակը հոն էր...:

Ուրեմն օղակայանին մէջ իր կերածը կը պատկանէր քովի մարդուն, որ կը ջանար ազնուաբար իր հետ բաժնեկցիլ կրկնեփուկները: Յետեւաբար ի՛նքն էր աներեսն ու անփափկանկատը եւ դժբախտաբար շատ ուշ էր ներողութիւն խնդրելու:

Այս պատմութիւնը ցոյց կու տայ, թէ պէտք չէ աճապարանքով դատել ուրիշներուն սխալները, որովհետեւ յաճախ կարելի է սխալիլ:

